

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը	Ֆինանսական ապահովումը	Հղումը
1	2	3	4	5	6	7
«Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Մաքսային ընթացակարգերի հստակեցում (պարզեցված ընթացակարգերի սահմանում), ամբողջությամբ էլեկտրոնային հայտարարագրման մեխանիզմի ներդրման համար իրավական հիմքի ստեղծում, բարեխիղճ տնտեսվարողների սուբյեկտների համար հատուկ (այդ թվում պարզեցված) ընթացակարգերի ներդրում	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	
«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	Անուղղակի եղանակով հարկային պարտավորություններ հաշվարկման	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	ՀՀ ֆինանսների նախարարություն	սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե	

փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	մեխանիզմի կատարելագործում					
«Հարկերի վճարումից խուսափելու և ապօրինությունների դեմ պայքարի ազգային ծրագրի» նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ստվերային հատվածի կրճատում, ինքնահայտարարագրման մշակույթի ամրապնդում	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե		հունիսի 3-րդ տասնօրյակ		ՀՀ կառավարության 16.05.2013թ. «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N515-Ա որոշում

Ձև N 2

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

(ՀՀ պետական կառավարման մարմնի անվանումը)

ՑԱՆԿ

2014 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիր	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Հղում
1	2	3	4
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	1. ՀՀ մաքսային տեղեկատվական տեխնոլոգիաների ներդաշնակեցում Մաքսային միության անդամ պետությունների տեղեկատվական համակարգերի հետ	<ul style="list-style-type: none"> Մաքսային միության անդամ երկրների տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնասիրությունների և փորձի փոխանակումների իրականացում, Մաքսային միության մաքսային օրենսդրության համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի կիրառության բիզնես գործընթացների վերլուծություն, մաքսային ծառայության տեղեկատվական համակարգերի՝ Մաքսային միության անդամ երկրների տեղեկատվական համակարգերի հետ փուլային ինտեգրման ծրագրի մշակում, ՀՀ մաքսային ծառայության տեղեկատվական տեխնոլոգիաների և 	

	համակարգերի՝ Մաքսային միության անդամ երկրներում կիրառվող ԱՏԳ ԱԱ-ին անցման նախապատրաստական աշխատանքների իրականացում	
2.Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործում	<ul style="list-style-type: none"> վերլուծական կարողությունների զարգացմամբ ռիսկային ոլորտների գործունեության տեսակների բացահայտում, ռիսկային տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցումների կիրառում 	<p>ՀՀ կառավարության 16.05.2013թ. «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N515-Ա որոշում</p> <p>ՀՀ կառավարության «ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային վարչարարության 2012-2014 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» 23.02.2012թ. N 195-Ն որոշում</p>
3.Հարկ վճարողների սպասարկման մեխանիզմների զարգացում	<ul style="list-style-type: none"> հարկ վճարողների սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակների ընդլայնում, կատարելագործում, միասնական ստանդարտների սահմանում, ուսումնական ծրագրերի իրականացում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվական ձեռնարկների հրապարակում հարկային և մաքսային մարմինների կողմից հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների տեսակի և քանակի ավելացում, այդ թվում՝ էլեկտրոնային վճարումների համակարգի գործարկում, դրամարկղային գրքերն էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորության ապահովում, հարկ վճարողի էլեկտրոնային դարանում հարկային պարտավորությունների մասին տեղեկացման համակարգի ներդրում հայփոստի բաժանմունքներում հարկ վճարողների սպասարկման կետերի ընդլայնում հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգի ներդրում 	<p>ՀՀ կառավարության 16.05.2013թ. «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N515-Ա որոշում</p> <p>ՀՀ կառավարության «ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային վարչարարության 2012-2014 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» 23.02.2012թ. N 195-Ն որոշում</p>